

«ՄԵԼ ՄԵՏԱԼ»

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Բանեցված կապարաթթվային մարտկոցների
վերամշակման գործարանի վերազինման

*Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն
(լրամշակված)*

Ձեռնարկող՝
«ՄԵԼ ՄԵՏԱԼ» ՍՊԸ

(ստորագրություն) Կ.Տ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	4
2. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ	6
3. ՆԱԽԱԳԾԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԶՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ	8
3.1. Զրոյական տարբերակ	8
3.2. Քննարկվող տարբերակներ	8
4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ՝ ԱՅԴ ԹՎՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	10
4.1. Տեղադիրքը	10
4.2. Կլիմայական պամանները	12
4.3. Օդային ավազան	15
4.4. Զրային ռեսուրսները	15
4.5. Հողերի բնութագիրը	16
4.6. Կենսաբազմազանություն	17
4.6.1. Բուսական աշխարհ	17
4.6.2. Կենդանական աշխարհ	18
4.7. Բնության հատուկ պահպանվող տարածքներ	18
5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	19
5.1. Առկա իրավիճակը	19
5.2. Օգտագործվող հումքի բնութագրերը	19
5.2.1. Մարտկոցների բնութագիրը	19
5.2.2. Կապարի թափոն	20
5.2.3. Ծծմբական թթու	20
5.3. Արտադրական գործընթացների նկարագրությունը	21
5.3.1. Բանեցված կապարաթթվային մարտկոցների վերամշակման տեղամաս 21	21
5.3.2. Կապարի թափոնների հալման տեղամաս	22
5.3.3. Գազամաքրման համակարգեր	22
6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ 27	27
6.1. Հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերը	27
6.2. Ազդեցություն մթնոլորտային օդի որակի վրա	27
6.2.1. Ծծմբական թթվի արտանետումները	27
6.2.2. Կապարի ձուլում	27
6.2.3. Արտանետումների կազմակերպում	28
6.3. Զրային ռեսուրսներ	32
6.3.1. Զրոգտագործում	32
6.3.2. Զրահեռացում	32
6.4. Թափոնների կառավարում	33
6.5. Ազդեցությունը կենդանական և բուսական աշխարհի վրա	34
6.6. Սոցիալական ազդեցությունը	34
6.7. Կումուլյատիվ (հավաքական) ազդեցություն	35
7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	36

8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	38
9. ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՎԹԱՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	39
10. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ	41
11. Մոնիթորինգի պլան	44
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	45
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	46
ՀԱՎԵԼՎԱԾ 1. Գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկի արդյունքները.....	46
ՀԱՎԵԼՎԱԾ 2. 3-րդ հանրային քննարկումների հայտարարություն, մասնակիցների ցանկ և արձանագրություն.....	102
ՀԱՎԵԼՎԱԾ 3. Զաղվածք պետական միասնական գրանցամատյանից/պետ. ռեգիստրի վկայական/.....	107
ՀԱՎԵԼՎԱԾ 4. Սեփականության վկայական	108
ՀԱՎԵԼՎԱԾ 5. Պետական տուրքի վճարման անդորրագիր	110

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՄԵԼ ՄԵՏԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից մշակված, բանեցված կապարաթթվային մարտկոցների վերամշակման գործարանի վերազինման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման սույն հաշվետվությունը կազմված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 15.04.2022թ. ներկայացված ՏԱ21 տեխնիկական առաջադրանքի պահանջների հիման վրա:

Սույն փորձաքննական գործընթացի սկզբնական փուլում որպես Ձեռնարկող հանդես է եկել ԱՍ ՄԵՏԱԼ ՍՊ ընկերությունը, սակայն գործընթացի հետագա փուլում ԱՍ ՄԵՏԱԼ ՍՊ ընկերությունն իր իրավունքները փոխանցել է ՄԵԼ ՄԵՏԱԼ ՍՊ ընկերությանը, որից հետո որպես Ձեռնարկող է հանդես եկել ՄԵԼ ՄԵՏԱԼ ՍՊ ընկերությունը: Այս մասին պաշտոնական գրությամբ 09.06.2022թ-ին պատշաճ կերպով ծանուցում է ուղարկվել ՇՄ նախարարությանը, որը վերջինիս կողմից 15.06.2022թ-ի N 4/26.5/9351 գրությամբ ընդունվել է ի գիտություն: Ուսումնասիրելով շուկան, նոր Ձեռնարկողը որոշել է հրաժարվել պղնձի և ալյումինի թափոնների ձուլումից(ինչը նախատեսված էր նախնական գնահատման փուլում և համապատասխանաբար արտացոլված է եղել տրամադրված Տեխնիկական առաջադրանքում) և համապատասխանաբար այդ նպատակի վառարաններ չեն նախատեսվում: Այս հանգամանքով պայմանավորված, որոշակի տարբերություն կա նախատեսվող գործընթացի նախնական գնահատման հայտով և հետագայում ՇՄԱԳ հաշվետվությամբ ներկայացված գործընթացների միջև, ինչը պայմանավորված է ի հայտ եկած նոր գործարար հանգամանքներով, որը ներկայացվեց վերևում: Սույն ՇՄԱԳ հաշվետվության շրջանակներում հարկ է նշել, որ այս հանգամանքը շրջակա միջավայրի վրա ազդեցության տեսանյունից կարելի է դիտարկել դրական ցուցանիշ՝ պայմանավորված ի սկզբանե նախատեսված արտադարական ծավալների, տեխնոլոգիական գործընթացների՝ հետևաբար նաև շրջակա միջավայրի վրա ակնկալվող հնարավոր բացասական ազդեցության ծավալների նվազեցմամբ:

Սույն հաշվետվությունում ներկայացված են տեղանքների բնակլիմայական և սոցիալական ելակետային տվյալները:

Հաշվետվությունում նկարագրված են գործունեության տեխնոլոգիական բնութագրերը, օգտագործվող հումքը և տեխնիկական միջոցները:

Դիտարկվել են այլընտրանքային տարբերակները, ներառյալ գրոյական տարբերակը:

Գնահատվել են նախատեսվող գործունեության բնապահպանական և սոցիալական ռիսկերը, որոնց վերլուծության արդյունքում մշակվել են բացասական ազդեցությունը կանխող կամ նվազեցնող միջոցառումներ:

Աշխատանքների պատշաճ կազմակերպման նպատակով մշակվել է բնապահպանական կառավարման պլան: Մշակված միջոցառումների արդյունավետությունը վերահսկելու համար ներկայացվել է մշտադիտարկումների (մոնիթորինգի) ծրագիր:

Սույն հաշվետվությունում ներկայացվող գործունեությունը վերաբերում է վտանգավոր թափոնների գործածության գործունեությանը և իրականացվելու է ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի արտադրական գոտում՝ Արտադրական հանգույց, 8 հասցեում, նախկինում գործող մետաղների վերամշակման գործարանի տարածքում:

Նախաձեռնության ձեռնարկող է «ՄԵԼ ՄԵՏԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

Տարածքը գտնվում է արդյունաբերական գոտում, շրջակայքում գործում են այլ արտադրական կազմակերպություններ, սպասարկման օբյեկտներ և պահեստային տարածքներ:

2. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթաօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),
3. <<Թափոնների մասին>> ՀՀ օրենք (24.11.2004 թ.),
4. <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենք (07.02.2012թ.),
5. <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենք (01.11.1994թ.),
6. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենք (21.06.2014թ.),
7. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենք (11.04.2005թ.),
8. Հայաստանի Հանրապետության բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին օրենք
9. Հայաստանի Հանրապետության բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին օրենք Հայաստանի Հանրապետության բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառած վնասի հատուցման սակագների մասին օրենք
10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”
11. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման “Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”
12. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”
13. <<Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 30.06.2003թ-ի N 121-Ն որոշում:
14. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.),
15. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.),

16. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.),
17. ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում,
18. ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում,
19. ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում,

Համաձայն <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով սահմանված դասակարգումների, նախատեսվող գործունեությունը դասվում է <<Ա>> կատեգորիայի և ենթակա է փորձաքննության՝ երկու փուլով:

3. ՆԱԽԱԳԾԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԶՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ

3.1. Զրոյական տարբերակ

Զրոյական կամ առանց գործողության տարբերակ նշանակում է, որ որևէ փոփոխություն տեղի չի ունենում և բանեցրած մարտկոցների հավաքում և առաքում չի իրականացվում: Այս դեպքում՝

- Բնապահպանական և սոցիալական ազդեցության հետ կապված ռիսկեր կամ վտանգներ չեն առաջանա,
- Կենսամիջավայրի վրա լրացուցիչ տեխնածին ներգործություն և ճնշում չի առաջանա:

Մյուս կողմից, զրոյական տարբերակի ընտրության դեպքում չեն իրականանա նաև մի շարք հնարավորություններ, այդ թվում.

- Հանրապետության տարբեր վայրերում կադտոտվի բանեցված մարտկոցներում պարունակվող էլեկտրոլիտների արտահոսքով և կապարի միացություններով, որոնք խիստ թունավոր և վտանգավոր նյութեր են,
- Նախագծի իրականացման ընթացքում նոր աշխատատեղերի ստեղծման և դրա արդյունքում տեղի բնակչության եկամուտների ավելացման հետ կապված հնարավորությունները,
- Չի ներդրվի ժամանակակից տեխնոլոգիական արտադրություն և չեն կատարվի համապատասխան հարկային վճարումներ:

3.2. Քննարկվող տարբերակներ

Դիտարկվել են ստորև ներկայացված 2 տարբերակները.

Ա. Ընդունվում են միայն դատարկ մարտկոցներ, որոնք կուտակվում են փակ շինությունում և որոշակի քանակի դեպքում բարձվում են գնորդի տրանսպորտային միջոցների մեջ և առաքվում:

Այս տարբերակի առավելություններն են.

- Ցածր ծախսայնություն
- Ընդունման և պահեստավորման համար ավելի քիչ տարածքներ

Տարբերակի թերությունները՝

- Միայն դատարկ մարտկոցներ ընդունելու պահանջը կարող է պատճառ հանդիսանալ մասնավոր անձանց և մասնագիտացված կազմակերպությունների համար նախօրոք դատարկել մարտկոցները, ընդ որում թթվային մնացորդները (լուծույթները) կարող են լցվել բնական միջավայր և աղտոտել այն:

Բ. Ընդունվում են ինչպես լրակազմ, անպես էլ դատարկ կամ մասնատված մարտկոցներ, կատարվում է մարտկոցների դատարկում և հավաքված լուծույթի վնասագերծում: Դատարկված մարտկոցները կուտակվում են և առաքվում գնորդին, իսկ հավաքված լուծույթի չեզոքացումն իրականացվում է «ՄԵԼ ՄԵՏԱԼ» ՍՊԸ-ի կողմից, տեղում՝ հանգած կրի միջոցով:

Այս տարբերակի առավելություններն են.

- Բացառվում է թթվային մնացորդների անկանոն դատարկումը և շրջակա միջավայրի աղտոտումը
- Հնարավորություն է ստեղծվում ընդունել և առաքել ավելի շատ մարտկոցներ:

Տարբերակի թերությունները՝

- Լրացուցիչ կապիտալ ծախսեր թթվի հավաքման հանգույցի կազմակերպման և ընթացիկ ծախսեր այդ հանգույցի շահագործման համար,
- սպասարկող անձնակազմի ուսուցում վտանգավոր նյութերի (ծծմբական թթու) հետ վարվելու նպատակով:

Վերլուծելով նշված տարբերակների դրական և բացասական կողմերը, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ շրջակա միջավայրի նախարարության “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական կենտրոն” ՊՈԱԿ-ի պահանջը, ընտրվել է երկրորդ տարբերակը: Ընդ որում, այս տարբերակը ընտրվել է վատագույն պայմանների համար՝ երբ բոլոր մարտկոցները կարող են լինել թթվով և թթվային լուծույթի ընդունման համար նախատեսվել են առավելագույն տարողությամբ թթվակայուն կոնտեյներ /բաքեր/:

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ՝ ԱՅԴ ԹՎՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

4.1. Տեղադիրքը

Նախատեսվող գործունեությունը ծավալվելու է ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի Արտադրական հանգույց, 8 հասցեում գտնվող գործարանում: Գործարանի հարևանությամբ՝ ամենամոտը ավելի քան 340 մ հեռավորությամբ տեղակայված է այլ արտադրական հանգույց: Երևան-Երասխա Մ-2 միջպետական ճանապարհից հեռավորությունն ավելի քան 310 մ է: Ամենամոտ բնակելի տունը տեղակայված է 302 մ հեռավորությամբ: Թիվ 8 արտադրական հանգույցի անմիջական հարևանությամբ տեղակայված բնակելի թաղամասեր չկան, իսկ համեմատաբար մոտ տեղակայված կառուցվածքները Թիվ 8 արտադրական հանգույցի ֆունկցիոնալ ենթակառույցներն ու մասնաշենքերն են:

Տեղանքի իրադրության սխեման բերված է ստորև՝ Նկար 1-ում:

Գեոմորֆոլոգիական տեսակետից բնութագրվող տարածքը հարթ է, բացարձակ նիշերի տարբերությունը ծովի մակերևույթից կազմում է մոտ 850- 900մ:

Արտաշատ համայնքը գտնվում է Արարատյան հարթավայրի կենտրոնական հատվածում, Արաքս գետի ավազանում: Երկրաբանական կառուցվածքի և տեկտոնիկայի գոյություն ունեցող ուսումնասիրությունների համաձայն՝ բնութագրվող տեղանքի երկրաբանական կառուցվածքի ձևավորմանը մասնակցում են գրունտների հզոր շերտախումբ: Գրունտների վերին շերտերում մեծ տարածում ունեն ժամանակակից և էոցին-միոցենի գետալճային, կրաքարային և հրաբխածին տարբեր հզորությունների գրունտներ:

Սեյսմիկ բնութագրերը

Համաձայն ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»-ի և ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի՝ տեղամասը գտնվում է սեյսմիկ երրորդ գոտում: Գրունտների հնարավոր սեյսմիկ արագացումները կազմում են $A=0.4g$ և ունի 9 և ավելի բալ սեյսմիկ ռիսկայնության աստիճան:

4.2. Կլիմայական պայմանները

Տվյալները բերված են ըստ ՀՀՇՆ II-7-01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթղթի: Բնութագրվող տարածքին, քանի որ գտնվում է Արտաշատ քաղաքում, բնորոշ են «Տաք» կլիմայական ցուցանիշները: Արտաշատ քաղաքին բնութագրական են շոգ և չորային ամառները: Բարձրությունը ծովի մակարդակից կազմում է 829.1 մետր: Օդի հուլիսյան առավելագույն միջին ջերմաստիճանը $+25.30^{\circ}\text{C}$ է, իսկ հունվար ամսի միջին ջերմաստիճանը՝ -3.6°C : Բցարձակ առավելագույն ջերմաստիճանը $+43^{\circ}\text{C}$ է, իսկ բացարձակ նվազագույնը՝ -29°C : Օդի միջին հարաբերական խոնավությունը 64 % է, տարեկան տեղումների քանակը՝ 254 մմ: Քամու միջին արագությունը կազմում է 2-3 մ/վրկ: Տարվա մեջ ձնածածկույթով օրերի թիվը 36 է: Կայուն ձյան ծածկույթ չի ձևավորվում: Միջին տվյալներով ձմեռը սկսվում է դեկտեմբերի երկրորդ կեսից և վերջանում մարտի առաջին կեսին: Բնահողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 40 սմ:

Ստորև բերված են տեղանքի կլիմայական ցուցանիշները ըստ Արտաշատի օդերևութաբանական կայանի տվյալների:

Աղյուսակ 4.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը

Օդերևութա- բանական կայան	Օդերևութա- բանական կայանի բարձրությո- նը, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C0												Միջին տարե- կան	Բացար- ձակ նվազա- գույն	Բացարձակ առավելա- գույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Արտաշատ	829	-3.6	-0.9	5.6	12.7	17.5	21.5	25.3	24.8	19.8	13.0	6.0	-0.6	11.8	- 29	43

Աղյուսակ 4.2. Օդի հարաբերական խոնավությունը

	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		հունվարին	օգոստոսին
Արտաշատ	829	78	73	63	58	59	54	51	52	57	68	73	79	64	64	32

Աղյուսակ 4.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Օդերևութա- բանական կայան	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Ձնածածկույթ, մմ		
	Ըստ ամիսների												Առավելագույն տասնօրյակային ձնածածկույթը	Տարվա ձնածածկույթի օրերը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակը
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Արտաշատ	18	18	27	36	40	25	11	8	10	22	24	17	40	36	46
	18	20	32	36	43	34	27	22	28	36	31	25			

Աղյուսակ 4.4. Քամու պարամետրերը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								Անհողմությունների տևողություն, %	Միջին ամսական արագություն, մ/վ	Միջին տարեկան արագություն, մ/վ	Ուժեղ քամիներով (Մ15/մ/վ) օդերևութաբանական	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "n" տարիների		
			Հյուսիսային (Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավարևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիսարևմտյան (ՀսԱրմ)					20	50	100
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Արտաշատ	920.2	Հունվար	7	8	10	20	12	10	15	18	88	0.3	0.4	7	21	24	26
			1.7	1.7	2.7	3.1	2.4	2.0	2.2	1.7							
		Ապրիլ	4	9	12	27	13	8	13	14	74	0.6					
			1.7	1.8	2.1	2.8	2.5	2.8	2.8	2.6							
		Հուլիս	8	7	9	16	9	9	18	24	80	0.4					
			1.7	1.9	1.7	2.0	2.0	1.0	2.7	2.3							
		Հոկտեմբեր	7	12	12	19	8	10	16	16	85	0.3					
			1.6	1.5	2.1	2.0	1.5	2.1	2.4	2							

4.3. Օդային ավազան

Արտաշատ քաղաքի օդային ավազանի աղտոտվածությունը ձևավորվում է ավտոտրանսպորտային միջոցների, բնակչության կենսագործունեության և սակավաթիվ արդյունաբերական ձեռնարկությունների ազդեցության արդյունքում:

Մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածությունը հանրապետության տարածքում վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից: Սակայն, Արտաշատ քաղաքում չկան ՊՈԱԿ-ի դիտակետեր և բնակավայրի օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշները որոշվում են հաշվարկային եղանակով՝ ըստ բնակչության թվաքանակի:

Համաձայն ՊՈԱԿ-ի հաշվարկային տվյալների, Արտաշատ քաղաքի օդային ավազանում ֆոնային աղտոտվածությունը կազմել է՝

- ածխածնի օքսիդ՝ 0.8 մգ/մ³,
- ազոտի երկօքսիդ՝ 0.015 մգ/մ³,
- ծծմբային անհիդրիդ՝ 0.05 մգ/մ³,
- անօրգանական փոշի՝ 0.3 մգ/մ³:

Անմիջապես ներկայացվող տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը որոշելու համար ս. թ. հունիսի 6-ին կատարվել է նմուշառում, նմուշները տեղափոխվել ՀՀ շրջակա միջավայրի նախարարության

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ լաբորատորիա:

Ըստ այդմ.

NO₂ – 0.019 մգ/մ³

SO₂ – 0.063 մգ/մ³:

Անալիզների վերաբերյալ հաշվետվությունը բերված է սույն հաշվետվության հավելվածների մասում:

4.4. Ջրային ռեսուրսները

Տարածաշրջանի հիմնական ջրային զարկերակը Արաքս գետն է:

Արաքսը հանրապետության խոշորագույն գետն է: Անդրսահմանային գետ է, որի ավազանն ընդգրկում է Թուրքիայի, Հայաստանի, Իրանի և Ադրբեջանի տարածքը:

Ունի 1072 կմ երկարություն¹, որից 200 կմ կազմում է Հայաստանի և Թուրքիայի սահմանը: Հայաստանի գետերի մեծագույն մասը (որոնց ավազանները, միայն վերցված, կազմում են հանրապետության տարածքի 73.5 տոկոսը) պատկանում է Արաքսի ավազանին: Արաքսը վաղնջական ժամանակներից հանդիսացել է հայոց քաղաքակրթության կարևոր բնօրրաններից մեկը:

Արաքսի սնումը խառն է, հորդացումը՝ մարտից հունիս, առավելագույնը՝ մայիսին: Առաջին հորդացումը՝ մարտ–ապրիլ, կապված է ցածրադիր վայրերի ձնհալքի և գարնանային անձրևների հետ, երկրորդը (ավելի բուռն)՝ մայիս–հունիս,

¹ <https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D6%80%D5%A1%D6%84%D5%BD>

լեռների ձնհալքի հետ: Ամենացածր մակարդակները լինում են հուլիս–օգոստոսին և ձմռանը: Երրորդ թույլ հորդացումը աշնանային անձրևներից է: Հորդացման ժամանակ Արաքսը մեծ ավերածություններ է առաջացնում, հատկապես Արարատյան, Միլիի ու Մուղանի դաշտերում: Հորդացումների ժամանակ Արաքսը միջին և ստորին հոսանքներում հաճախակի փոխում է իր հունը՝ միշտ շարժվելով դեպի հարավ:

Գործարանի տարածքից ուղիղ գծով հեռավորությունը մինչև Արաքսի մոտակա հատված կազմում է 3.3 կմ:

4.5. Հողերի բնութագիրը

Նախատեսվող գործունեության տարածքին հիմնականում բնորոշ են բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ ցեմենտացած հողային տիպեր: Առանձին տեղամասերում հողերը ներկայացված են նաև դարչնագույն հողերի կրազերծված ենթատիպով:

Անմիջապես ներկայացվող տարածքում հողերի աղտոտվածությունը որոշելու համար ս. թ. հունիսի 6-ին կատարվել է նմուշառում գործարանի տարածքի չորս կետից, նմուշը ընդհանրացվել է և տեղափոխվել ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ լաբորատորիա: Անալիզների արդյունքները բերված են աղյուսակ 4. 6-ում:

Աղյուսակ 4. 6. Հողի որակի տվյալները

հ. հ.	Չափված ցուցանիշ	Չափման միավոր	Չափված արժեք
1	Լիթիում	գ/կգ	0.00499
2	Բերիլիում	գ/կգ	0.000755
3	Բոր	գ/կգ	0.0437
4	Նատրիում	գ/կգ	1.85
5	Մագնեզիում	գ/կգ	0.321
6	Ալյումին	գ/կգ	1.04
7	Ընդհանուր ֆոսֆոր	գ/կգ	0.822
8	Կալիում	գ/կգ	9.50
9	Կալցիում	գ/կգ	5.41
10	Տիտան	գ/կգ	2.27
11	Վանադիում	գ/կգ	0.0778
12	Քրոմ	գ/կգ	0.0366
13	Երկաթ	գ/կգ	3.13
14	Մանգան	գ/կգ	0.382
15	Կոբալտ	գ/կգ	0.0121
16	Նիկել	գ/կգ	0.0543

հ. հ.	Չափված ցուցանիշ	Չափման միավոր	Չափված արժեք
17	Պղինձ	գ/կգ	0.0459
18	Ցինկ	գ/կգ	0.0784
19	Արսեն	գ/կգ	0.00736
20	Սելեն	գ/կգ	0.00268
21	Ստրոնցիում	գ/կգ	0.184
22	Մոլիբդեն	գ/կգ	0.00105
23	Կադմիում	գ/կգ	0.000408

Անալիզների վերաբերյալ հաշվետվությունը բերված է սույն հաշվետվության հավելվածների մասում:

4.6. Կենսաբազմազանություն

Արտաշատ քաղաքի և դրա մերձավոր տարածքների կենսաբազմազանությունը ձևավորվել է ինչպես սեփական աշխարհագրական դիրքի, բնակլիմայական, ռելիեֆային և լանդշաֆտային պայմանների, այնպես էլ մերձավոր տարածքների ֆլորիստական շրջանների բուսական և կենդանական աշխարհների ազդեցության ներքո:

Բուսական աշխարհը սերտ կապված է բնակլիմայական, մորֆոլոգիական, աշխարհագրական և այլ պայմանների հետ, որոնք հստակեցնում են և կանոնավոր կերպով տարանջատում տարբեր տիպի ֆլորաների սահմանները: Համաձայն Ս. Դալի կենդանական աշխարհի տարածման սահմանները ավելի անորոշ են ու աղոտ, ավելի լայն և դժվար են սահմանազատվում շնորհիվ իրենց շարժունակության և ապրելաձևի առանձնահատկությունների (բնակալում, նստակյաց կամ չվող կենսակերպ, արտազոնալ բնակատեղերի առատություն):

4.6.1. Բուսական աշխարհ

Բուսական աշխարհը ներկայացված է Երևանյան ֆլորիստական շրջանների միջև ընկած սահմանային, միջին բարձրության լեռնային տափաստանային զոնայի տարածքներին բնորոշ բուսականության տեսակներով, որոնցում գերակշռում են հատիկա և հատիկա- տարազգի ներկայացուցիչները:

Մարդու գործունեության զարգացմանը զուգընթաց (հողերի գյուղատնտեսական օգտագործում, անասունների արածացում, տնտեսական գործունեություն և այլն) որպես կանոն կրճատվում է լանդշաֆտային զոնայի տեսակների ինչպես կազմը, այդպես էլ քանակը՝ ընդհուպ մինչև որոշ տեսակների իսպառ վերացումը:

Արարատի մարզում բուսականությունը կիսաանապատային է և անապատային:

Կիսաանապատայինից առկա են բնական բուսածածկի հետևյալ տիպերը՝ Օշինդրա-Էֆեմերային, մասնակցությամբ՝ *Artemisia fragrans* Willd., *Kochia prostrata* (L.) Schrad., *Capparis spinosa* Willd., *Ceratoides papposa* Botsch. Et Ikonn., *Atraphaxis spinosa* L.,

Rhamnus pallasii Fisch. et Mey., Tanacetum argyrophyllum (C. Koch) Tzvel., Poa bulbosa L. Bromus, Aegilops, Eremopyrum, Alyssum. Aeloropus littoralis (Gouan) Parl.

Անապատայինից առկա են բնական բուսածածկի հետևյալ տիպերը՝ Հալոֆիլ, մասնակցությամբ՝ Salsola ericoides Bieb., S. Dendroides Pall., S. Nitraria Pall., Halocnemum strobilaceum (Pall.) Bieb.

Դեղաբույսերից տարածված են՝ Տուղտ Դեղատու, Տուղտ հայկական (Althaea officinalis, A. armeniaca), Իշավարունգ սովորական (Ecballium elaterium), Տորոն ներկատու (Rubia tinctorum), Սպանդ սովորական (Peganum harmala), Փշատենի նեղատերև (Elacagnus angustifolia), Ալոճենի մուգ արնագույն և այլ տեսակներ (Crataegus atrosanguinea):

Հազվադեպ և անհետացող բուսատեսակներից են՝ Գազ տարօրինակը (Astragalus paradoxus), Կոմուխ Օշեի (Inula aucherana):

Անմիջապես ներկայացվող տարածքը գտնվում է Արտաշատ քաղաքի արտադրական գոտում, որտեղ չկա բնական բուսածածկ:

4.6.2. Կենդանական աշխարհ

Ողնաշարավոր կենդաններից հանդիպում են՝ շնագայլ, եղեգնակատու, վայրի խոզ, գյուրգա, ջրասամույր, միջերկրածովյան կրիա, ճահճակուղբ, կաքավ, նապաստակ, խեցգետին, մշկամուկ, անողնաշարավորներից՝ անատամ:

Հազվադեպ և անհետացող կենդանատեսակներից են՝ Սովորական երկարատև չղջիկ (Miniopterus schreibersi Kuhl), ծական (Sabanejewia aurata De Filippi):

Անմիջապես ներկայացվող տարածքը գտնվում է Արտաշատ քաղաքի արտադրական գոտում, որտեղ չկան վայրի կենդանիների ապրելավայրեր:

4.7. Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Տարածաշրջանի բնական էկոհամակարգի, դրա բաղադրիչների, բուսական ու կենդանական տեսակների պահպանությունը, բնականոն զարգացումը, վերարտադրությունն ու կայուն օգտագործումը ապահովելու նպատակով տարբեր ժամանակահատվածներում շրջակա տարածքներում կազմակերպվել են մի շարք բնության հատուկ պահպանվող տարածքներ.

«Խոսրովի անտառ» պետական արգելոցը,

«Խոր Վիրապ» պետական արգելավայրը:

Նշված պահպանվող տարածքները բավականաչափ հեռու են նախատեսվող աշխատանքների իրականացման վայրերից և չեն կրի որևէ ազդեցություն այդ աշխատանքների իրականացման արդյունքում:

5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

5.1. Առկա իրավիճակը

Ներկա պահին տարածքում առկա է հիմնական արտադրական մասնաշենքը և մի քանի օժանդակ շինություններ: Հիմնական մասնաշենքում տեղադրված և ժամանակին շահագործվում էին մի քանի գազային և էլեկտրական վառարաններ, խողովակաշար, շենքից դուրս առկա են ցիկլոն, արտագատվող գազերի գտման համակարգ, օդափոխության համակարգ և բանեցված մարտկոցների մասնատման սեղան:

Տարածքում կան մեքենաների կայանատեղի, պահեստային շինություն, ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման և էլեկտրամատակարարման ենթակառուցվածքները:

5.2. Օգտագործվող հումքի բնութագրերը

5.2.1. Մարտկոցների բնութագիրը

Մարտկոցները էլեկտրաքիմիական հոսանքի աղբյուր են, որոնք կազմված են մեկ կամ մի քանի գալվանական էլեմենտներից: Մարտկոցի վոլտաժը մեծացնելու համար օգտագործվում են բազմակի էլեմենտներ, ինչպես 12-Վ ավտոմոբիլային մարտկոցներում: Մարտկոցների աշխատանքի հիմքում ընկած են օքսիդավերականգնման ռեակցիաները: Օքսիդացման և վերականգնման շնորհիվ էլեկտրոդների միջև տեղի է ունենում էլեկտրոնների փոխանակում, որի շնորհիվ էլ մարտկոցը ապահովում է հոսանք: Մարտկոցի օգտագործման տևողությունը կախված է մարտկոցում առկա նյութերի որակից և էլեկտրոլիտի վիճակից:

Ըստ շահագործման, մարտկոցները բաժանվում են երկու տեսակի՝

- *Առաջնային*, որոնք լիցքաթափվելուց հետո չեն կարող վերալիցքավորվել և պետք է վերաթողարկվեն կամ հանվեն գործածությունից, երբ վոլտաժը կնվազի՝ հասնելով զրոյի:

- *Երկրորդային*, որոնք լիցքաթափվելուց հետո կարող են վերալիցքավորվել և օգտագործվել կրկին:

«ՄԵԼ ՄԵՏԱԼ» ՍՊ ընկերությունը նախատեսում է հավաքել միայն կապարաթթվային մարտկոցներ (նկար 5):

Կապարաթթվային մարտկոցները հիմնականում օգտագործվում են ավտոմեքենաներում: Նրանք մեծամասամբ կազմված են վեց գալվանական բջիջներից, որոնցից յուրաքանչյուրի լարումը սովորաբար կազմում է 2 Վ: Ամեն բջջի կատոդը պատրաստվում է կապարի երկօքսիդից (PbO_2), իսկ անոդը՝ կապարից: Երկու էլեկտրոդները գտնվում են ծծմբական թթվի լուծույթի մեջ:

Կապարաթթվային մարտկոցը երկրորդային մարտկոց է:



Նկար 5. Ավտոմեքենաների կապար-թթվային մարտկոց

5.2.2. Կապարի թափոն²

Կապարը մետաղ է, լատիներեն՝ Plumbum (Pb):

Կապարը Մենդելեևի աղյուսակի 14-րդ խմբի տարր է, ատոմային համարը՝ 82: Այն հեշտ ձուլվող արծաթագույն մետաղ է, խտությունը նորմալ պայմաններում՝ 11. 34 գ/սմ³, հալման ջերմաստիճանը՝ 327. 3°C:

Կապարը մարդկությանը հայտնի է մի քանի հազարամյակ, այն հեշտությամբ արդյունահանվում և մշակվում է:

Կապարի արտադրության համար հիմնականում օգտագործում են գալենիտ պարունակող հանքանյութ:

5.2.3. Ծծմբական թթու

Մարտկոցներում պարունակվող էլեկտրոլիտը ծծմբական թթվի լուծույթ է:

Ծծմբական թթուն՝ H₂SO₄, անօրգանական միացություն է, ուժեղ թթու է, ծծմբի օքսիդացման բարձրագույն աստիճանով: Նորմալ պայմաններում խիտ ծծմբական թթուն ծանր յուղային հեղուկ է առանց հոտի և գույնի: Արդյունաբերությունում ծծմբական թթու է համարվում ինչպես H₂SO₄-ի ջրային լուծույթը, այնպես էլ դրա խառնուրդը ծծմբային անհիդրիդի (օլեում՝ SO₂) հետ:

Ծծմբական թթուն շատ ագրեսիվ միացություն է, այն լուրջ վտանգ է ներկայացնում մարդու օրգանիզմի բոլոր հյուսվածքների համար: Ծծմբական թթուն առաջացնում է շնչառության խանգարումներ, հագ, լարինգիտ, բրոնխիտ, տրախեիտ և այլն:

Աղյուսակ 5.1-ում բերված են ներկայացված նյութերի թույլատրելի կոնցենտրացիաները աշխատանքային գոտում ըստ ՀՀ առողջապահության նախարարի 6 դեկտեմբերի 2010 թ. N 27-Ն հրամանով հաստատված N2.2.5-004-10 սանիտարական կանոնների:

Աղյուսակ 5.1. Հումքատեսակների պարունակության նորմը աշխատանքային գոտում

Նյութի անվանումը	Մահմանային թույլ- լատրելի կոնցենտ-	Ազդեցության տեսակը	Վտանգավո- րության դասը
------------------	---------------------------------------	-----------------------	---------------------------

² <https://ru.wikipedia.org/wiki/%D0%A1%D0%B2%D0%B8%D0%BD%D0%B5%D1%86>

	բացիան (ՄԹԿ) աշխատանքային գոտում, մգ/մ ³		
Ծծմբական թթու	1	Ընդհանուր	2
Կապար	-/0.05	Ընդհանուր	1

5.3. Արտադրական գործընթացների նկարագրությունը

5.3.1. Բանեցված կապարաթթվային մարտկոցների վերամշակման տեղամաս

Նմանատիպ ձեռնարկությունների փորձը ցույց է տալիս, որ հիմնականում բերվում են դատարկ մարտկոցներ: Այնուամենայնիվ գործնականում գրեթե անհնար է խուսափել այնպիսի մարտկոցային թափոնների ընդունումից, որոնցում կա նաև թթվային լուծույթ, ուստի նախատեսվում է տեղամասը կահավորել նաև նոսր էլեկտրոլիտի չեզոքացման հանգույցով, որը բաղկացած կլինի թթվակայուն երկու բաքերից, կրի պահեստից և լուծույթի թթվայնությունը չափող սարքերից:

Կապարաթթվային մարտկոցների թափոնների և այլ հումքից ակնկալվող կապարի վերամշակման պլանային արտադրողականությունը նախատեսված է՝ 1980 տ/տարի: Անմիջապես մարտկոցների քանակը կտատանվի 2100 – 2200 տ/տարի:

Բանեցված մարտկոցները ընդունվում և տեղափոխվում են տարածքի պահեստային հատված, որը գտնվում է ծածկի տակ: Ընդունող բանվորը տեսակավորում է մարտկոցները՝ դատարկ մարտկոցները տեղափոխվում են մասնատող սեղանի վրա, իսկ մնացած մարտկոցները տեղափոխվում են էլեկտրոլիտի վնասագերծման տեղամաս:

Էլեկտրոլիտների տեղամասը գտնվում է արտադրական մասնաշենքի ներսում, որտեղ կտեղադրվեն երկու հատ թթվակայուն նյութերից պատրաստված 1 մ³ ծավալով բաքեր, կրի պահեստ և հանգած կրի պատրաստման տարողություն:

Էլեկտրոլիտ պարունակող մարտկոցների պարունակությունը լցվում է թթվակայուն բաքերից մեկի մեջ, մինչև ծավալի 0. 8 մասի մակարդակը /800 լ/, որից հետո սկսում են լցնել երկրորդ բաքը: Լցվելուց հետո առաջին բաքի լուծույթում չափվում է թթվայնությունը pH-մետրի օգնությամբ, ըստ ստացված արդյունքների պատրաստվում է համապատասխան քանակությամբ հանգած կիր (կրակաթ), որը լցվում է բաքի մեջ՝ չեզոքացնելով բաքում պարունակվող ծծմբական թթուն: Չեզոքացված լուծույթը մեկ անգամ ևս ստուգվում է pH-մետրով և 6. 5 – 8. 5 ցուցանիշին համապատասխանելու դեպքում լցվում է կոյուղի:

Դատարկված մարտկոցները տեղափոխվում են մարտկոցների մասնատման /կտրատման/ սեղան, որտեղ մարտկոցի մարմինը սղոցվում է, պլաստիկ մասերը տեղափոխվում են աղաց, իսկ կապար պարունակող ցանցերը և նստվածքը բեռնվում են սայլակների մեջ և տեղափոխվում հալման վառարաններ:

Առանձնացված պլաստիկ մասերը մանրացվում են աղացի միջոցով և հավաքվում պարկերի մեջ: Մանրացված պլաստիկ նյութը վաճառվում է

համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին հետագա վերամշակման կամ վաճառքի համար:

5.3.2. Կապարի թափոնների հալման տեղամաս

Տեղամասը գտնվում է արտադրական մասնաշենքի եզրամասում: Այստեղ տեղադրվում են երկու հատ հորիզոնական պտտվող գազային վառարան: Միաժամանակ աշխատելու է միայն մեկ վառարան, երկրորդը կմիացվի միայն առաջինի վերանորոգման կամ նախապատրաստման ժամանակ:

Վառարանի տեխնիկական ցուցանիշները բերված են ստորև.

Աղյուսակ 5. 2. Կապարի հալման վառարանների տեխնիկական ցուցանիշները

Տեսակ	Արտադրողականություն, (տ/ժամ)	Ջերմաստիճան, (°C)	Վառելիք	Էլ. հզորություն, (կՎտ)	Ծավալ, (մ³)	Քաշ, (տ)	Չափերը, (մմ)
Գազային	2	≤700	Բնական գազ	5.5×2	2.4	4.8	2750×1980 ×2460

Կապարի թափոնի սայլակներով տեղափոխվում է վառարանների բեռնման հարթակ, միացվում են գազային այրիչը, գազամաքրման համակարգի օդամղիչը սկսում են բեռնել կապարի թափոնը:

Հալվածքը հոսում է մետաղական տարողությունների մեջ, որոնք սայլակների և տելֆերի միջոցով տեղափոխվում են ձուլման տեղամաս և բեռնվում ռաֆինացման վառարանների մեջ, որոնք նույնպես աշխատում են գազային վառելիքով:

Ռաֆինացման վառարան տրվում է օդ՝ կոմպլեքսորի միջոցով և կաուստիկ սոդա: Այս հանգույցում իրականացվում է կապարի հալվածքի մաքրում և ձուլակտորների ստացում:

Ձուլման վառարանից հեղուկ կապարը հոսում է կաղապարման հոսքագծի թուջե կաղապարների մեջ, որոնցում հովանալուց հետո ձուլակտորները տեղափոխվում են նույն տարածքի պահեստային մաս, որտեղից և առաքվում են պատվիրատուներին:


5.3.3. Գազամաքրման համակարգեր

Կապարի հալման և ռաֆինացման վառարանները միացված են գազամաքրման համակարգին, որը բաղկացած է 3 հատ նստեցման խուցերից, որոնցում նաև կատարվում է հովացում բնական եղանակով, 3 հատ կենտրոնախույս ցիկլոններից, խառնման խցից, թևքային գոիչների հանգույցից և օդամղիչից: Արտանետումները իրականացվում են օդամղիչի վրա տեղադրված 8. 2 մ բարձրությամբ և 0. 8 մ տրամագծով խողովակի միջոցով:


Գազամաքրման հանգույցի արդյունավետությունը ըստ փոշու որսման ցուցանիշների որոշվում է հետևյալ կերպ.

- Նստեցման խուցի արդյունավետությունը՝ 20 – 30 %, ընդունվում է 20%,
- Ցիկլոններ՝ 50%,
- Թևքային գոիչներ՝ 90 - 95%, ընդունվում է 90%:


Ընդամենը կապարի ձուլման տեղամասի գազամաքրման համակարգի արդյունավետությունը կկազմի՝ 96%:



Բանեցված մարտկոցների վերամշակման տեղամասի սխեմա



Կապարի թափոնների հալման և ձուլման սխեմա



Կապարի ձուլման արտադրամասի գազամաքրման համակարգի սխեմա

6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

6.1. Հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերը

Նախատեսվող գործունեության հիմնական ռիսկերը կապված են.

- բանեցրած մարտկոցների բաղադրության հետ (մարտկոցները կարող են պարունակել էլեկտրոլիտի մնացորդներ /ծծմբական թթու/, մետաղական կապար և կապարի միացություններ),
- գունավոր մետաղների թափոնների աշխատելու անհրաժեշտության հետ
- բարձր ջերմաստիճանների պայմաններում իրականացվող տեխնոլոգիական գործընթացների հետ,
- վնասակար նյութերի արտանետումների հետ:

6.2. Ազդեցություն մթնոլորտային օդի որակի վրա

Ազդեցությունը մթնոլորտային օդի վրա կարող է առաջանալ բանեցրած մարտկոցներից էլեկտրոլիտի /ծծմբական թթվի/ մնացորդների դատարկման և չեզոքացման, կապարի, ալյումինի և պղնձի ջարդոնի ձուլման ընթացքում:

6.2.1. Ծծմբական թթվի արտանետումները

Թթվային մարտկոցները շահագործման արդյունքում սպառում են թթուն կամ այն խիստ նոսրանում է: Նոր մարտկոցներում թթվի միջին կոնցենտրացիան կազմում է 40%, բանեցրած մարտկոցներում այդ տոկոսը անհամեմատ ավելի ցածր է: Ընկերության մասնագետների կողմից մետաղների ընդունման բազաներում իրականացված հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ յուրաքանչյուր տ բանեցված էլեկտրոլիտներում էլեկտրոլիտի ծավալը կազմում է 5%, իսկ թթվի կոնցենտրացիան առնվազն 2 անգամ պակաս է և կարող է կազմել՝ 20%:

Այսպիսով թթվի առավելագույն քանակը կկազմի՝

$$70 \text{ մ}^3/\text{տարի} \times 0.2 \times 1.83 \text{ տ/մ}^3 = 25.6 \text{ տ/տարի:}$$

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ լուծույթը նոսր է և բոլոր գործողությունները տեղի են ունենալու փակ շինության մեջ, ծծմբական թթվի առավելագույն արտանետումը կարող է կազմել 0.1 %:

Հետևաբար ծծմբական թթվի առավելագույն տարեկան արտանետումը կարող է կազմել՝ $25.6 \text{ տ/տարի} \times 0.001 = 0.026 \text{ տ/տարի:}$

Բանեցված մարտկոցների տեղամասը աշխատելու է տարեկան 260 օր, 8 ժամ/օր, 2080 ժամ/տարի:

Վարկյանում արտանետումները կկազմեն՝

$$0.026 \text{ տ/տարի} \times 10^6 \text{ գ/տ} : 3600 \text{ վրկ/ժամ} : 2080 \text{ ժամ/տարի} = 0.0035 \text{ գ/վրկ:}$$

6.2.2. Կապարի ձուլում

Սույն հաշվետվությունում արտանետումների հաշվարկները կատարվել են Եվրամիության Բնապահպանական գործակալության կողմից ընդունված արտանետումների գույքագրման ձեռնարկի (EMEP/EEA emission inventory guidebook, 2013) հիման վրա:

Ա. Կապար պարունակող թափոնների ձուլում

Մարտկոցների մասնատման և էլեկտրոլիտի չեզոքացման արդյունքում առաջացած կապար պարունակող թափոնները սայլաներով տեղափոխվում է պղնձի հոսքագծում առկա հորիզոնական պտտվող գազային վառարան, որտեղ բարձր ջերմաստիճանի պայմաններում տեղի է ունենում կապարի հալում և կաղապարում:

Գազի այրման և կապարի թափոնի հալման ընթացքում առաջանում են պինդ մասնիկներ, ինչպես նաև ազոտի և ածխածնի օքսիդներ:

Կապար պարունակող թափոնների տարեկան առավելագույն քանակը՝ 2000 տ/տարի: Վառելքի (բնական գազ) ծախսը՝ 98600 մ³:

Արտանետումների տեսակարար գործակիցները, օգտագործված մեթոդական ձեռնարկները և արտանետումների քանակները ներկայացված են աղյուսակ 6.1-ում:

Աղյուսակ 6.1. Նստվածքի հալման արտանետումների հաշվարկի արդյունքները

№	Արտանետվող նյութը	Արտանետման տեսակարար գործակիցը	Չափման միավորը	Մեթոդական ձառնարկ
Կապարի հալվածք				
1	Պինդ մասնիկներ /կիված մասնիկներ/	1.625	կգ/տ հալվածք	SNAP: 040309b, Secondary lead production
Վառելիքի այրում				
2	NO _x	2.15	գ/մ³ գազ	Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами
3	CO	12.9	գ/մ³ գազ	

Աղյուսակ 6.2. Կապար պարունակող թափոնների ձուլման արտանետումները

№	Արտանետվող նյութը	Արտանետման քանակը		
		գ/ժամ	գ/վրկ	տ/տարի
1	Պինդ մասնիկներ /ՊՄ, ՊԲ հալվածք/	1562	0. 434	3. 25
2	NO _x	102. 0	0.03	0. 212
3	CO	610. 6	0.17	1. 27

6.2.3. Արտանետումների կազմակերպում

Կապարի հալման համար նախատեսված հորիզոնական պտտվող վառարանը կահավորված է գործող գազամաքրման համակարգով, որը բաղկացած է 3 հատ նստեցման խցերով, երեք հատ ցիկլոններով և թևքային գոիչների հանգույցով, օդամղիչով և արտանետման խողովակով: Ինչպես նախորդ գլխում նշված է, համակարգի գումարային արդյունավետությունը կազմում է 99. 35%:

Համապատասխանաբար կախված մասնիկների արտանետումը կկազմի՝

3. $25 \text{ տ/տարի} \times (100 - 96)/100 = 0.13 \text{ տ/տարի կամ } 0.0174 \text{ գ/վրկ:}$

Նստեցման խցերը և ցիկլոնների ստորին մասում առկա բունկերները պարբերաբար դատարկվում են:

Թնքային գտիչները բաղկացած են գործվածքային պարկերով (bags), ինչպես նաև թափահարող մեխանիզմով, որի աշխատանքի արդյունքում նույնպես հավաքվում է որսված փոշին: Պարկերը ծառայում են մինչև մեղանիկական վնասում, որից հետո դրանք փոխարինվում են: Պարկերի փոխարինման հաճախականությունը դժվար է գնահատել, քանի որ հայտնի չէ թե երբ դրանք կվնասվեն: Վնասված պարկերը հանվում են թափահարումից հետո և դրանք չեն պարունակում վնասակար նյութեր, ուստի դրանք դասվում են կենցաղային աղբի շարքին և կենցաղային աղբի կազմում տեղափոխվում են կենցաղային աղբավայր:

Սանիտարա - պաշտպանիչ գոտի (ՄՊԳ)

Համաձայն 245-71 սանիտարական նորմերի, բանեցված մարտկոցների վերամշակման համար սանիտարապաշտպանիչ գոտի սահմանված չէ: Այնուամենայնիվ հաշվի առնելով, որ տարածքում, բացի մարտկոցների պլաստմասսե կարկասների մեխանիկական մանրացման գործընթացը, իրականացվում է նաև մետաղական/կապարային մասի վերամշակում և ձուլում՝ մինչև 2000 տ/տարեկան քանակներով, նախատեսվող գործունեության համար ապահովված է 245-71 սանիտարական նորմերով պահանջվող սանիտարապաշտպանիչ գոտին/ՄՊԳ-ն, որն ըստ 245-71 սանիտարական նորմերի 300 մ է: Ինչպես ներկայացված է իրադրության սխեմայում, նախատեսվող գործունեության տարածքի սահմանը մոտակա բնակելի տնից գտնվում է ավելի քան 300 մ հեռավորության վրա: Ընդ որում, տեխնոլոգիական և մասնագիտական տեսանկյունից առավել տրամաբանական է այդ հեռավորությունը դիտարկել, ոչ թե նախատեսվող գործունեության գործարանի պատից կամ սահմանից, այլ օդատարի կետից, որն այս դեպքում ավելի հեռու է տեղակայված, քան նախատեսվող գործունեության գործարանի մոտակա պատը/սահմանը ամենամոտ գտնվող բնակելի տնից:

Աղյուսակ 6.7. Արտանետումների աղբյուրի բնութագրերը և արտանետումների քանակները

Արտադրության, տեղամասի անվանումը	Արտանետումների առաջացման աղբյուրները		Արտանետման աղբյուրը	Արտանետման աղբյուրի համարը	Արտանետման աղբյուրի բարձրությունը, H, մ	Աղբյուրի տրամագիծը, մ	Արտանետման արագությունը, մ/վրկ	Արտանետման ջերմաստիճանը T°C
	անվանումը	քանակը						
1	2	3	4	5	6	7	8	9
Կապարի տեղամաս	Գազային վառարաններ	6	Խողովակ	1	8. 2	0.8	12.0	180
Էլեկտրոլիտի չեզոքացման տեղամաս	Չեզոքացման բաք	2	Խողովակ	2	8.0	0.3	6.0	20

Աղյուսակ 6.7-ի շարունակությունը

Մաքրման ենթակա նյութերի Ապահով- վածության գործակիցը, %	Մաքրման նվազագույն աստիճանը	Աղբյուրի կոորդինատները քարտեզ սխեմայի վրա				Նյութերի անվանումը	Արտանետումների քանակները	
							գ/վրկ	տ/տարի
X ₁	X ₂	Y ₁	Y ₂					
1 0	1 1	1 2	1 3	1 4	1 5	1 6	1 7	1 8
100	96/98	65	-	8	-	❖ Կախված մասնիկներ	0.0174	0.13
-	-					❖ NO ₂	0.03	0.212
-	-					❖ CO	0. 17	1. 27
-	-	5	-	58	-	❖ H ₂ SO ₄	0.0035	0.026

Աղյուսակ 6. 8. Արտանետվող նյութերի բնութագրերը և ամփոփ քանակները

№	Արտանետվող նյութը	Նյութերի առավ. միանվագ ՍԹԿ, մգ/մ ³	Վտանգավորության դասը	Արտանետումները	
				գ/վրկ	տ/տարի
1	ԿՄ	0.5	3	0.0174	0.13
2	NO ₂	0.2	3	0.03	0.12
3	CO	5	4	0.17	1.27
4	H ₂ SO ₄	0.3	2	0.0035	0.026

Գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկների արդյունքները

Արտանետումների ազդեցությունը գնահատելու նպատակով կատարվել են մթնոլորտում դրանց ցրման հաշվարկ և արդյունքները համեմատվել են սանիտարական նորմերի հետ:

Մթնոլորտում վնասակար արտանետումների ցրման հաշվարկները կատարվել են համակարգչի վրա, «Էռա» համակարգչային ծրագրով, 6.7-րդ աղյուսակում բերված տվյալների հիման վրա:

Հաշվարկներով որոշվում են.

- հաշվարկային կետի կոորդինատները, մ;
- վնասակար արտանետումների գետնամերձ կոնցենտրացիաները ՍԹԿ մասով;
- ջահի առանցքի ուղղությունը;
- քամու արագությունը մ/վրկ-ով, որի դեպքում հաշվարկային կետում գետնամերձ կոնցենտրացիան հասնում է առավելագույն արժեքին:

Հաշվարկների արդյունքները բերված են ստորև: Հավելված 1-ում բերված է համակարգչային հաշվարկը:

Ըստ այդ հաշվարկների աղտոտվածության առավելագույն մակարդակը բոլոր նյութերի համար գտնվում են թույլատրելի նորմերի սահմաններում:

Աղյուսակ 6. 9. Գետնամերձ կոնցենտրացիաները

№	Աղտոտող նյութեր	Բնակելի գոտիների առավելագույն միանվագ ՍԹԿ ³ , մգ/մ ³	Գետնամերձ կոնցենտրացիա	
			ՍԹԿ մասով	Մգ/մ ³
1	Ազոտի երկօքսիդ	0.2	0.0889	0.0178
2	Ածխածնի օքսիդ	5	0.1631	0.8158
3	Ծծմբական թթու	0.3	0.0164	0.00492
4	Կախված մասնիկներ	0.5	0.61	0.305

³ “ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴՆ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԽՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԿՈՆՑԵՆՏՐԱՅԻԱՆԵՐԻ-ՍԹԿ) ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ” ՀՀ կառավարության 2 փետրվարի 2006 թվականի N 160-Ն որոշում

6.3. Ջրային ռեսուրսներ

6.3.1. Ջրօգտագործում

Բանեցված մարտկոցների տեղամասում ջուրը օգտագործվելու է կրի լուծույթի պատրաստման և սպասարկող անձնակազմի տնտեսական և կենցաղային կարիքների համար:

Կրի լուծույթի պատրաստում

Ըստ նախնական հաշվարկների կրի լուծույթի պատրաստման համար կպահանջվի առավելագույնը 70 մ³ թարմ ջուր, օրական՝ 0.27 մ³:

Հովացման ջրապահանջ

Կապարի վառարանների հովացման համար նախատեսված է շրջանառու համակար:

Կապարի հովացման համակարգի ջրի ծավալը կազմում է 12 մ³:

Ջրի ժամային կորուստը կկազմի՝ 1%, համապատասխանաբար տարեկան՝

Կապար՝ $12 \times 0.01 \times 700 = 84$ մ³/տարի:

Խմելու-տնտեսական կարիքներ

Աշխատանքային ռեժիմը՝ 260 օր/տարի, մեկ հերթափոխով՝ 8 ժամ/օր:

Նախատեսվող մարտկոցների վերամշակման սպասարկումը իրականացնելու են 30 բանվոր և 10 ինժեներա-տեխնիկական աշխատող (ԻՏԱ):

Աշխատողները օգտվելու են տարածքում առկա հնարավորություններից, որը ունի ջրամատակարարում և կոյուղացված է:

Ջրի հաշվարկային ծախսերը որոշվում են համաձայն ՇՆ 2.04.01-25 չափաքանակների:

Աշխատողների խմելու և կենցաղային պահանջների համար ջրածախսը կազմում է՝

$W_{\text{խ.տ.}} = (n_1 \times N_1 + n_2 \times N_2) \times T$, որտեղ

n_1 – ԻՏԱ թվաքանակն է՝ 10 մարդ

N_1 – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n_2 – բանվորների թվաքանակն է՝ 30 մարդ

N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 260 օր

$W_{\text{խ.տ.}} = (10 \times 0.016 + 30 \times 0.025) \times 260 = 236.6$ մ³/տարի:

Օրական՝ 0.91 մ³/օր:

Ընդամենը ջրապահանջը կկազմի՝ 320.6 մ³/տարի կամ 1.23 մ³/օր:

6.3.2. Ջրահեռացում

Նախատեսվող գործունեության արդյունքում արտադրական արտահոսք առաջանում է էլեկտրոլիտի չեզոքացման հանգույցում և կազմում է 140 մ³/տարի, 0.54 մ³/օր:

Չեզոքացումը ներառում է հետևյալ գործընթացը.



Քանի որ ջուրը ենթակրվում է չեզոքացման և պարզեցման՝ մեխանիկական մասնիկների և կապարի ու դրա միացությունների նստեցման, ջրի որակը կհամապատասխանի կոյուղու քաղաքային ցանցի /Վեոլիա ջուր/ պահանջներին:

№	Նյութերի անվանումը	Սահմանափակում քաղաքային կոյուղու կոլեկտորում գ/մ ³
1.	ԹԿՊ _{լրիվ}	≤ 240.0
2.	ԹՔՊ	≤ 360.0
